

Տղան պատասխանեց .

— Լա՛ւ, հոս բերէ՞ք իմ հաւատարիմ ձիս, որպէսդի տեսնէ թէ իր տէրը ինչպէս մտաւ եռացող կաթի տաշտին մէջ եւ մեռաւ :

Գացին բերին ձին, եւ տղան հանելով հագուստները, նետուեցաւ տաշտին մէջ, բայց այդ պահուն ձին այնքան ուժգին վրնջեց որ ամբողջ եռացող կաթը օդին մէջ ցատկեց, տղան ալ մատնին բռնեց եւ ծարին վերադարձուց :

Երբ ծարը տեսաւ որ մարդը տաշտէն դուրս ելաւ աւելի երիտաւարդ եւ աւելի սիրուն, ըսաւ .

— Ես ալ պիտի փորձեմ եւ պիտի դոնեմ ոսկի մատնին :

Այս ըսելով իր մատնին նետեց եռացող կաթի տաշտին մէջ եւ ինքն ալ հտեւէն նետուեցաւ, զայն գտնելու համար : Ժողովուրդը սպասեց ու սպասեց, ափ ի բերան մնաց որ այնքան երկար տեւեց . վերջապէս կաթը պարպեցին եւ տաշտին խորը գտան ծարը խաշած, կասկարմիր : Այն ատեն մարդը ըսաւ .

— Այժմ, ծարուհի, դուն իմս ես, ես ալ քուկդ եմ :

Եւ այնուհետեւ միասին՝ ապրեցան երջանիկ :



Ն Շ Խ Ա Ր Ն Ե Ր

×

Աշխարհումս ամենայն բան մի դատարկ ձայն է, իմացե՛ք :

... Շատ մարդ կայ որ յիսուն տարի՝ չարչարվելով փող է կուտել, Յայտնի գիտնեմ, որ կու մեռնի՝ չի կարիլ այն փողը ուտել .

Այնպէս մարդոց սրտի մէջը սառտանայն սեմնակ է գտել, էն փողն դիպի, յետ ու առաջ, դժոխքի փայն է, իմացե՛ք :

Աշուղ Սէյեադ (Քնար Հայկական, 1868)

×

— «Երբ կը խորհիմ թէ քառասուն տարուան տառապանքներով աստուածացեալ այս ազգին կեանքն այլեւս անհատական կեանքի մը պիտի վերածուի տակաւ, կամ քանի մը հարիւր հազար անհատներու կեանքին, հոգիս՝ հսկայի համեմատութիւն մ'առած, կ'ապըստամբի» :

Նդիա Տէմիրճիպաշեան, (Օրագիր, 30 Սեպտ. 1905)